ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐ

Հ Ր Ա Մ Ա Ն

«09» հունվարի 2018 թ. N 1-Ա

Ս. ՆԱՎԱՍԱՐԴՅԱՆԻ ՀԵՏ ԺԱՄԿԵՏԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԿՆՔԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Քաղաքացիական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետով և Հայաստանի Հանրապետության քաղաքացիական ծառայության խորհրդի 2004 թվականի մայիսի 31-ի «Ժամկետային աշխատանքային պայմանագիր կնքելու կարգը սահմանելու մասին» N 436-Ն որոշմամբ սահմանված հավելվածի 3-րդ կետի «դ» ենթակետով և 5-րդ կետով, ինչպես նաև հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական ծառայության խորհրդի նախագահի 2017 թվականի դեկտեմբերի 21-ի N 01/13/1/3141-17 գրությունը.

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության աշխատակազմի ներքին աուդիտի բաժնի գլխավոր մասնագետի (ծածկագիր՝ 30-3.1-152) թափուր պաշտոնը զբաղեցնելու համար Սոնա Նավասարդյանի հետ 2017 թվականի հունվարի 8-ից կնքել ժամկետային աշխատանքային պայմանագիր:

ԻԳՆԱՏԻ ԱՌԱՔԵԼՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ

Հ Ր Ա Մ Ա Ն

« 28 » դեկտեմբերի 2017թ. N 67-Ա(Գ)

Ա. ԱՎԵՏԻՍՅԱՆԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Քաղաքացիական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 10-րդ մասով, 15-րդ հոդվածի 3-րդ մասի գ) կետով և 4-րդ մասով, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական ծառայության խորհրդի 2002 թվականի հունիսի 13-ի «Քաղաքացիական ծառայության թափուր պաշտոն զբաղեցնելու համար մրցույթ անցկացնելու կարգը սահմանելու մասին» N 17-Ն որոշմամբ սահմանված հավելվածի 75-րդ և 76-րդ կետերով, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական ծառայության խորհրդի 2004 թվականի մայիսի 31-ի «Ժամկետային աշխատանքային պայմանագիր կնքելու կարգը սահմանելու մասին» N 436-Ն որոշմամբ սահմանված հավելվածի 18-րդ կետի ա) ենթակետով, ինչպես նաև հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության աշխատակազմի տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի բաժնի առաջատար մասնագետի (ծածկագիր՝ 30-3.3-39) թափուր պաշտոնը զբաղեցնելու համար մրցույթ անցկացնող մրցութային հանձնաժողովի 2017 թվականի դեկտեմբերի 27-ի եզրակացությունը և Ա. Ավետիսյանի դիմումը.

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Արմենուհի Ավետիքի Ավետիսյանին 2017 թվականի դեկտեմբերի 28-ից՝ երեք ամիս փորձաշրջանով, նշանակել Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության աշխատակազմի տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի բաժնի առաջատար մասնագետի (ծածկագիր՝ 30-3.3-39) պաշտոնում՝ լուծելով տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի բաժնի առաջատար մասնագետի (ծածկագիր՝ 30-3.3-39) ժամանակավոր թափուր պաշտոնը զբաղեցնելու համար 2017 թվականի հոկտեմբերի 9-ին կնքված N 6 ժամկետային աշխատանքային պայմանագիրը:
2. Աշխատավարձը՝ համաձայն հաստիքային ցուցակի:

Ա. ԿԻՐԱԿՈՍՅԱՆ